

# ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը 1956—1957 ուսումնական տարին դիմավորեց նախորդ տարիներից ավելի կազմակերպված և նախապատրաստված։ Ճեմարանը այս տարի էլ ապահովվեց դասախոսական որակյալ կազմով, հոգացվեցին դասարանական և գրենական անհրաժեշտ պիտույքները, ննջարանային, առողջապահական հարմարությունները, ուսանողությունը ապահովվեց հագուստով և գոհացուցիչ չափով կազմակերպվեց ուսանողության սննդի հարցը։

Ահա այս տարի ևս Ճեմարանը իր դռները բացեց ժողովրդի հոգևոր ծառայության եռանդը իրենց սրտերում աճեցրած նոր ուսանողների առաջ։

Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ Գերագույն Հոգևոր Խորհուրդը մանրակրկիտ ուսումնասիրություններից հետո վավերացրեց 1956—1957 ուսումնական տարվա ծրագիրը։

Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի ցուցմունքով ու թելադրանքով Ճեմարանի ուսումնական ծրագրում լայն տեղ է հատկացված կրոնական, եկեղեցագիտական, աստվածաբանական և հայագիտական առարկաներին։ Մասնագիտական առարկաներին զուգընթաց մեծ ուշադրություն է դարձվել հանրակրթական առարկաների վրա, հատկապես լեզուների՝ գրաբարի, աշխարհաբարի, ռուսերենի և ֆրանսերենի վրա։

Կազմված ծրագրի համաձայն Հոգևոր Ճեմարանը կոչված է մեծ ու պատվավոր դեր կատարելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կյանքում, իր կոչման ու պարտականության գիտակից, բարեկիրթ, բազմակողմանիորեն զարգացած, հավատավոր և հայրենասեր նոր հոգևորականության պատրաստության գործում։

Բերկրանքով ենք արձանագրում, որ այս տարի բացվեց Ճեմարանի Ա լսարանը, որտեղ սովորում են 5 սարկավագներ և 2 ուսանողներ, որոնք մոտիկ ապագայում կհամալրեն Հայ Եկեղեցու հոգևորականության շարքերը։

Սեպտեմբերի 10-ին սկսվեցին Հոգևոր Ճեմարանի ընդունելության քննությունները։ Այդ օրը Ճեմարանի բակը լի էր նորեկ աշակերտներով։ Տեսչության սեղանի վրա կար ավելի քան 30 դիմում։ Նոր ուսանողները եկել էին Հայաստանի տարբեր շրջաններից, Վրաստանից, Ադրբեջանից, Հյուսիսային Կովկասից։

Անհամբեր, հուզված, անբացատրելի ապրումներով համակված ուսանողները մոտենում էին քննական սենյակներին, որտեղ նստած էր քննիչ հանձնախումբը։ Թեկնածուները քննություն էին հանձնում հայ ժողովրդի պատմությունից, երաժշտությունից, հայոց լեզվից ու գրականությունից, ռուսաց

*լեզվից ու գրականությունից, բանավոր ու գրավոր։ Դատելով քննության արդյունքներից, ընդունվեցին միջնակարգ և յոթնամյա կրթություն ունեցող 20 ուսանողներ, որոնք անմիջապես ներկայացվեցին Վեհափառ Հայրապետին Նրա օրհնությունն ստանալու։ Վեհափառը օրհնեց բոլորին և նրանց հաջողություն մաղթեց ուսման մեջ։*

*Այժմ Հոգևոր Ճեմարանն ունի 4 դասարան 38 ուսանողներով, հետևյալ բաժանումով. Ա լսարան՝ 7, Գ դասարան՝ 14, Բ դասարան՝ 7, Ա դասարան՝ 10։*

*Սպասվում է 5 ուսանող Բուլղարիայից և 8 ուսանող Սիրիայից ու Լիբանանից։*

*Վեհափառ Հայրապետը Իրեն հատուկ հոգատարությամբ և գործիմացությամբ զբաղվում է միշտ Ճեմարանով։ Վեհափառի ցանկությամբ հրավիրվել է Կալիֆորնիայի առաջնորդ գերապատիվ Տ. Շնորհք եպիսկոպոս Գալստյանը որպես Ճեմարանի տեսուչ, որը շուտով կժամանի Էջմիածին։ Փոխտեսուչ է նշանակվել Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Անթարյանը և վերակացու՝ արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։*

*Կրոնական, եկեղեցական, աստվածաբանական, սուրբգրական և մասնագիտական այլ առարկաներ հիմնականում դասավանդելու են հոգևորականները Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, որը դասավանդելու է հոգեբանություն բարձր դասարանների համար։ Իսկ պատմական, լեզվական և այլ առարկաների համար հրավիրվել են լավագույն մասնագետներ, համալրելով նախորդ տարիների ուսուցչական կազմը։*

* * *

*Սեպտեմբերի 17-ին, երկուշաբթի օր, Ս. Խաչի մեռելոց հիշատակի օրը, հանդիսավոր իրադրության մեջ կատարվեց Հոգևոր Ճեմարանի պաշտոնական բացումը։*

*Ամբողջ ուսանողությունը ներկա է Մայր Տաճարում և մասնակցում է սուրբ պատարագի արարողության և հաղորդվում։ Երգվում է հանդիսավոր սուրբ պատարագը և ճեմարանականները երկյուղածությամբ մոտենում են Հաղորդության սուրբ սկիհին, մաքրվելու և նորոգվելու և աստվածային շնորհքներով լցված, նոր եռանդով սկսելու համար աշխատանքի։*

*Հոգևոր Ճեմարանի բակում եռուզեռ է։ Սրտատրոփ, անհամբեր, սպասում են Վեհափառ Հայրապետի գալստյան։ Ժամը 11-ն է։ Զանգը ազդարարում է Վեհափառ Հայրապետի գալստյան մասին։ Նորին Ս. Օծությունը, շրջապատված Գերագույն Հոգևոր Խորհրդի և միաբանության անդամներով, եկեղեցական թափորով հասնում է Ճեմարան և խանդավառ ծափահարություններով դիմավորվում է դասախոսական կազմի և ուսանողության կողմից։ Թափորը բարձրանում է երկրորդ հարկ։ Սկսվում է Ճեմարանի բացման հանդիսավոր արարողությունը։ Ուսանողությունը երգում է «Աշակերտք Քրիստոսի» շարականը, Ավետարանից գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը կարդում է Սերմանացանի առակը։ Ապա արժանապատիվ Տ. Ռուբեն քահանա Մարտիրոսյանը կարդում է Նարեկացու «Աղերս առ Ս. Հոգի»-ն (Բան ԼԴ). Հնչում է «Ամէն, ալէլուիա»-ն։ Վեհափառ Հայրապետը կատարում է ջրօրհնեքի կարգը և օրհնված ջուրը սրսկում ուսանողների վրա։ «Պահպանիչ»-ով վերջանում է հանդեսի առաջին մասը։*

*Ճեմարանի տեսչության կողմից երախտագիտության և շնորհակալության խոսք է ասում Մեսրոպ աբեղա Անթարյանը.*

*«Վեհափառ Տե՛ր, գերաշնորհ հայրե՛ր, Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվարժան անդամնե՛ր, հարգելի ուսուցիչնե՛ր և սիրելի ուսանողնե՛ր.*

*Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը այսօր մտնում է ուսումնական նոր տարեշրջան։ Վերստին բացվում են նրա դռները ուսումնատենչ ու եկեղեցանվեր հոգիների առաջ, նրանց բաշխելու համար իր հոգեպարար լույսը։ Կրթական-կրոնական այս օգտակար հաստատությունը դարձյալ ձեռնամուխ է լինում իր խիստ անհրաժեշտ առաքելության շնորհակալ աշխատանքներին։ Մեր ժողովրդի պատմական անցյալը երախտագետ վկան է այն սրբազան գործի, որը կատարվել է այսօրինակ հաստատությունների մեջ ու միջոցով։ Մենք նոր բեմ դուրս եկած ժողովուրդ չենք, և պետք է քաջաբար ասել, որ մեր բեմահարթակի վրա անհրաժեշտ բոլոր հնարավորություններն ունենք ցույց տալու մեր հնամյա ակնհայտ նվաճումները շատ ու շատ քաղաքակիրթ հանդիսատես ժողովուրդների առաջ։ Իսկ ո՞վ չգիտե, որ այդ նվաճումների առավելագույն մասը ստեղծված է մեր վանք-ճեմարանների կամարների տակ և շատ հաճախ, նրանց խոնավ նկուղների մեջ։ Կրոնական ու մշակութային, եկեղեցական և ազգային կյանքի լայն ասպարեզներում պատկառելի է նշել նրանց պատմական դերը։ Հայ ժողովուրդը և հայ մշակույթը ակնածանքով ու երախտագիտությամբ են նայում նրանց վրա։ Հոգևոր Ճեմարանները հանդիսացել են Հայաստանյայց Ս. Եկեղեցու զարկերակները, որ արյուն ու կյանք են ցամբել նրան, պահելով նրան միշտ առույգ*

ու կենսունակ, նույնիսկ հզոր՝ դիմագրավելու համար շատ անսովոր փորձանքներ։

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը եղել և մնում է իր նախորդների հարազատ շարունակությունը, ժառանգած լինելով նրանց բոլոր գեղեցիկ ավանդները և կենսագործելով նրանք մեկ առ մեկ։ Տաս տարիների իր գործունեության ընթացքում այս կամարների տակ հավաքված շատ ու շատ հոգիների մեջ նա ներարկել է կրոնական, եկեղեցասիրական և ժողովրդանվեր հիանալի զգացումներ։ Ուսուցել է նրանց ժողովրդի, Հայրենիքի և եկեղեցու սրբազան դատին նվիրաբերվելու պատրաստակամությունը։

Այսօր, առավել քան երբեք, շեշտված է մեր ժողովրդի հոգևոր սպասարկության անհրաժեշտությունը, և Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը առավելապես կոչված է այդ նպատակի փրագործման նվիրական գերն ստանձնելու։ Այս հանդիսավոր պահին իրավունքն ունենք ասելու, որ Վեհափառ Հայրապետի հայրական ջերմագին հոգատարության շնորհիվ, նա իր նոր տարեշրջանն սկսում է ավելի կազմակերպված և ավելի պատրաստ վիճակում։ Նորին Ս. Օծության անմիջական մասնակցությամբ ձեռք են առնված անհրաժեշտ բոլոր միջոցառումները Հոգևոր Ճեմարանը հետզհետե ավելի մոտեցնելու իր բարձր կոչումը լավագույնս կենսագործելու հնարավորությանը։ Ոչ ուշ ժամանակամիջոցում Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը պիտի կարելիությունն ունենա ցույց տալու իր աղյունավետ պտղաբերությունը իր եկեղեցանվեր ժողովրդին։ Մոտիկ ապագայում նրա շրջանավարտները կրոնական համեստ սքեմի տակ, իրենց բոլորանվեր նախորդների սրբազան տեսիլքներով խանդավառված, լինելով Հայաստանյայց Ս. Եկեղեցու ազնիվ և մանավանդ անկաշառ սպասարկուները, պիտի կարողանան իրենց կարևոր բաժինը բերել հայ կյանքի և հայ մշակույթի շինության ու բարգավաճման սրբազան գործին։

Թույլ տվեք, Վեհափառ Տե՛ր, վստահեցնել Ձեզ, որ Ձեր հույսերն ու ակնկալությունները կյանքի կկոչվեն և Ձեր անսահմանորեն փայփայած Հայաստանյայց Ս. Եկեղեցին և հայ ժողովուրդը երախտագիտությամբ կհիշեն Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի անունը։

Վեհափառ Տե՛ր, թույլ տվեք ուսուցչական կազմի և մեր երախտապարտ ուսանողության կողմից ցանկանալ Ձեզ երկար և արևշատ կյանք՝ ի բարգավաճումն հայ մշակույթի և հուրախություն հայ ժողովրդի։

Թո՛ղ Աստված միշտ անսասան պահի Իր իսկ հիմնած Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Ամենայն Հայոց Հայրապետությունը։ Թո՛ղ Աստված երկար արև պարգևի Հայոց ազգընտիր Հայրապետին»։

Ընդհանուր լռության ու հանդիսավոր իրադրության մեջ խոսք առավ Վեհափառ Հայրապետը և Իր հայրական խոսքն ուղղելով Ճեմարանի ուսանողության ասաց.

«Այս տարի ալ, երգով ու աղոթքով, կատարեցինք Հոգևոր Ճեմարանի 1956—1957 ուսումնական տարեշրջանի բացումը։ Այդ ձեռնարկությունը չէ երբեք, սիրելի՛ աշակերտներ։ Մենք կհավատանք, որ մեր գործը սուրբ և աստվածահաճո գործ է, և այն սկսանք խունկով, շարականով, աղոթքով ու օրհնությամբ։ Մենք այստեղ կհետապնդենք շատ համեստ նպատակ մը. դուք պիտի դառնաք Քրիստոսի այգիին, Անոր Եկեղեցիին երջանիկ մշակներ, հայ Եկեղեցիի հավատարիմ սպասավորներ։ Հոգևորականի համեստ սքեմի տակ, դուք պիտի դառնաք հայ հավատացյալ ժողովրդին հոգևոր մխիթարության բաշխող անձնավորություններ։ Մենք ձեր մտքի, սրտի, հոգիի ուժերը պիտի հավաքենք մասնիկ առ մասնիկ, զորացնելու համար մեր Ս. Եկեղեցին։ Դուք ձեր առջև պիտի դնեք այս խնդիրը — ինչո՞ւ եք եկած Ճեմարան, և ի՞նչ նպատակով։ Դուք պիտի սիրեք այն սուրբ գործը, որ ձեզ բերած է այստեղ։ Իզուր է այստեղ եկած այն աշակերտը, որ սեր չունի դեպի իր կոչումն ու ընդգրկելիք ասպարեզը։ Անկեղծ եղեք, ու ձեզմե ով որ իր հոգիին մեջ չզգար հոգևոր կոչման ձայնը, լավ է, որ հրաժարի այս ասպարեզեն և երթա այլ տեղ, ուր շատ ավելի հարմարություններ և հնարավորություններ կան տարբեր ասպարեզներու համար»։

Վեհափառ Հայրապետը հոգևոր կոչման վեհությունն ու նվիրականությունը բացատրելուց հետո խոսեց Ճեմարանի ուսանողության հատուկ ուսումնասիրության, հնազանդության և կարգապահության մասին, և ապա դասախոսական կազմը ներկայացրեց ուսանողությանը։

Բուռն ծափահարությունների տակ Վեհափառ Հայրապետը վերջացրեց Իր խոսքերը։ Սրահում հանդիսավոր կերպով հնչեց Հայրապետական մաղթանքը, որից հետո Վեհափառ Հայրապետը օրհնեց ներկաներին։

Մի պատմական, անմոռանալի էջ ևս ավելացավ Հոգևոր Ճեմարանի պատմության մեջ։

Նույն օրը, ժամը 2-ին, վանքի սեղանատան մեջ տրվեց ճաշկերույթ։ Ներկա էր ամբողջ միաբանությունը՝ Սահակ սրբազանի գլխավորությամբ, դասախոսական կազմը, ուսանողությունը, վանքի պաշտոնեությունը։ Միաբանության անունից խոսեցին գերաշնորհ Տ. Սահակ և գերաշնորհ Տ. Սուրեն եպիսկոպոսները, որոնք շնորհավորեցին Ճեմարանի

ուսանողությանը և մաղթեցին հաջողություն։ Գերաշնորհ սրբազան հայրերը պատմեցին նաև իրենց անցյալի հուշերը ճեմարանական կյանքից և կոչ արին ուսանողության՝ լինել արժանի հետևորդներ հոգևորականների հին սերնդին։ Դասախոսական կազմի անունից խոսեցին Ա. Նազարյանը, Ա. Հատիտյանը և Տ. Ռուբեն քահանա Մարտիրոսյանը։

Վանքի տնտեսա-ֆինանսական կառավարչության պետ պ. Հ. Սեղգարյանը սրտագին հույս հայտնեց մոտիկ ապագայում տեսնել արժանի հոգևորականների մի նոր սերունդ, նվիրված Մայր Աթոռի աշխատանքներին։

Ճաշից հետո ճեմարանի հանդիսության դահլիճում դասախոս Ա. Հատիտյանը խոսեց ճեմարանի ուսանողության պարտականությունների մասին։

Երեկոյան ժամը 7-ին փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղան ուսանողության ծանոթացրեց ճեմարանի ներքին կանոնադրությանը։

Անցավ ճեմարանի վերաբացման 1956—1957 ուսումնական տարվա առաջին հիշատակելի օրը։ Սեպտեմբերի 18-ից սկսվեցին կանոնավոր դասավանդությունները Հոգևոր ճեմարանում։